

1166

ՄԷՃՄԱՌՈՒԱՅԸ

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ

ԼՐԱԳԻՐ Ա. Զ. Գ. Ա. ՅԻՆ

— ԽՈՒՆԹԵՐԻ ԴԵՐՈՒՄ —

Ա. Զ. Գ. Ա. ՅԻՆ

Հայաստանի և Ասիական
գաւառայ բարենորոգման գոր-
ծադրութեան յապաղումը, հարկ
չկայ ծածկելու թէ, մեր ազ-
գայնոց բնագահուր մտաւան-
ջութիւնն անպատճառէ և համ-
բերութիւններն յետին ծայր կը
հասցնէ:

Մինչև ցարդ շատ իրենց
յոյսն ու ակնկալութիւնը Ս.
Պատրիարքին անվատ գործու-
նէութեանը և ազգասիրութեա-
նը վրայ դրած էին, բայց Ն.
Սրբազնութեան յուսահատա-
կան հրաժարականին վրայ՝ անկէ
ալ կտրելով յոյսերնին, այժմ
կապանն տեսնել թէ Ռ. Դրան
կառավարութիւնը ե՞րբ ժամու-
նակ պիտի ունենայ այդ բարե-
նորոգումներն գործադրել սկը-
սելու:

Այսօր անուրանալի իրողու-
թիւն մ'է թէ՛ Ռ. Դրան կառա-
վարութիւնը ամենէն աւելի կը
փափաքի ժամ յառաջ գործա-
դրութեան դնել Ասիոյ գաւա-
ռաց մէջ հարկ տեսնուած այն
բարենորոգումներն, որք իրեն
և միւս երկրէն տեսութեանց
միջև համաձայնութիւն կար-
գադրուած են, կ'մնայ խնդիրը
գիտնալ թէ՛ Դուռը երբ պիտի
ժամանակ պիտի ունենայ զա-
նոնք ի գործ դնելու:

Ատեն մը բարսքման դէմ
ժամանակ կարճ կամը չկտր, այ-
սօր կամը կայ՝ ժամանակ չկայ,
և այժմու ամենէն մեծ գծուա-
րութիւնը՝ այդ ժամանակն ու
միջոցը կարենալ գտնելն է:

Այնքանքն Ռ. Դուռը լիա-
զօր իշխանութեամբ երկու յանձ-
նաժողով ընտրեց, երկերկու
անդամներով, Հայ և Տաճիկ,
որք Հայաստանի (Կարին, Մուշ,
Վան, Տիգրանակերտ և Հալէպ)
գաւառներն են թաւով, տեղա-
կան պիտայքները պիտի ընտելն

և հարկ եղած բարենորոգում
ները պիտի հաստատեն:

Սոցա անդամներէն մին, որ
յոյն մ'էր, հրաժարելով, ասոր
տեղ ուրիշ հայ մ'ընտրուեցաւ,
հիմայ ալ մէկ ուրիշ տաճիկ ան-
դամը, Ղալիպ բաշայի համար
կըստի թէ հրաժարել է, և ո-
րոյ տեղ տալիսին ուրիշ մէկուն
ընտրուած ըլլալը պաշտօնապէս
չձանդուցուեցաւ: Եւ այդ ինչ
չէ, այսօր եթէ չընտրուի՝ վաղը
հարկաւ կընտրուի, զի ընտրելի
տաճիկ պաշտօնավարներէ աւել-
ի առատ ինչ բան կայ այսօր
մայրաքաղաքի մէջ:

Հայաբնակ գաւառաց մէջ
յիշեալ յանձնաժողովոյ ձեռք
հաստատուելիք բարենորոգ-
մանց ծրագիրներն, նոյն յանձ-
նաժողովոյ հաւաքով անդամաց
միայն տուած վտահայտութեանը
նայելով, արդէն պատրաստուելու
որոշուել և մէկ օրինակն անգը-
ղեսպան Սըր Լէյտօրի յանձ-
նուել է նորա ասկից մեկնելէն
առաջ: Միայն թէ յիշեալ յանձ-
նաժողովոյ ինչ կերպով ու եղա-
նակաւ իր պաշտօնը կատարելու
մասին հարկ եղած հրահանգ-
ները պարունակող ծրագիրը կը
մնայ պատրաստուելիք, ասի ալ
լինալուն պէս՝ պիտի յանձնուի
իրենց որ երեսն ճանրայ՝ երթալ
պաշտօնին կատարելու:

Իսկ ամենէն մեծ գծուա-
րութիւնը այդ Զրդ ծրագիրը
պատրաստելուն մէջն է:

Պէտք է կարծել թէ՛ Ռ. Դը-
րան տոկ մէկ խոստումով կամ
հրամանով հարկ եղած բարե-
նորոգումները կրնան գործադ-
րուիլ, այլ այդ գործադրու-
թեան համար նիւթական տա-
րերք կ'պակսի, դրամ և մարդ-
կ'պակսի:

Այս կէտն հաստատուելու հա-
մար՝ փոքր օրինակ մը բաւա-
կան է:

Հարեւանցի կերպով զի-

տենք արդէն թէ՛ Հայաստանի
մէջ կատարուելիք բնագ. բա-
րենորոգմանց զլիաւոր կեանքն
են՝ դատարանաց բարեկարգու-
թիւն և հատարակաց բարեկար-
գութիւնն ապահովելու համար
ժանտարմայի գրութեամբ սո-
տիկանութիւն մը:

Դատարանաց բարեկարգու-
թեան համար՝ նախապաշարու-
մէ ու կրօնամարտութենէ ազատ
և անկաշառ դատարաններ կը
պահանջուի, ժանտարմայի ու
տիկանութեան համար՝ գրել
կարգաւ գիտցող բարեկարգ-
մարդիկ պէտք են, այսպիսի
մարդիկներ ալ ճարելու, գըտ-
նելու և դործածելու համար ալ՝
լաւ թոշակ, այսինքն դրամ
պէտք է:

Կ'տեսնուի թէ բոլոր այդ
բարենորոգումներ ըստած բա-
նը՝ եթէ իր նիւթական նշանա-
կութեանը վերածելու ըլլաւ և
որ կողմն ալ դարձնես, միշտ
հարկէ ու դրամէ զատ ուրիշ բան
չեմ գտնելու:

Իսկ միթէ այդ քան դժուար
բան է մարդ ու դրամ գտնել,
պիտի հարցնենք թերեւս:

Կարծեմք աւելորդ է այս
հարցումն ընել, զի թուրքիւ
մէջ այդ երկուքն զատ ամեն
բան կայ, մինակ այդ երկու-
կարևոր տարրերը չկան:

Օրինակի համար, Ռ. Դուռը
պարտաւորեալ էր Ռուսերն Ադ-
րիանուպօլսոյ գաւառը պար-
պենուս պէս՝ զանի գրաւելու
և ներքին բարեկարգութեանը
վրայ հակելու համար 10 վաշտ
օսմ: զորք և 2 վաշտ ալ ժան-
տարմա ոստիկանութիւն պատ-
րաստ ունենալ անմիջապէս Ադ-
րիանուպօլսոյ զրկելու: Տեսանք
թէ այսքան զօրութիւն մը մէկ
ամսուան մէջ կազմուել անկա-
րող գտնուեցաւ Դուռը, զի դը-
րամ չկար ոչ զօրաց ռազմամը-
թները և ոչ ալ ժանտարմայի

ոստիկանութեան համար մարդ
և ոստիկանաց պիտոյք ճա-
րելու:

Դուռը Եւրոպայէն նոր փո-
խառութիւն մ'ընելուն կ'սպա-
սէր անձկանօք, որ այդ ստակին
մէկ մասը տառնց գործածէր,
գծադրաբար թօքվիլի ծրագ-
րին ալ բոլորովին ապարդիւն
և ի դերեւ ելնելով՝ այդ փո-
խառութեան գործն ալ ետ մը-
նաց և Դուռը ստիպուեցաւ 5-
600 հազար ոսկոյ փոխառու-
թիւն մը տեղւոյս պանքաներէն
ընելու ձեռնարկել, զի Եւրոպի-
ն և Եանեսայի գաւառները ա-
ռանց դրամի՝ չոր խօսքով զօրք
չկրնար զրկուիլ:

Բաց ասկից Եւրոպէ զրկուե-
լիք ժանտարմային ալ, որ 1600
հոգիէ այսինքն 2 վաշտէ պիտի
բաղկանային, մէկ ամսուան մէջ
հազիւ 2 Պէօլիւք այսինքն 160
հոգի կրցան զրկուիլ, այդ մար-
դիկն ալ բնակիք չուրայ մէջէն
բարձրահասակ, յաղթանդամ
ու տեսքոտ եղողներէն ընտրե-
ուելով, առանց ուշ դրուելու
թէ այդ մարդիկը հարկ եղած
կրթութիւնը, մարդկային կեն-
ցադաբարութիւն, գրելու և
կարդալու հմտութիւն ունին
թէ ոչ, ասկից զատ ժանտարմ-
անքը տաճիկներէ և քրիստոն-
եայներէ խառն կազմուելու մա-
սին ալ փոյթ չտարուեցաւ, այն-
պէս որ ամսուան մ'աշխատու-
թեանէն ետքը՝ եղածն ալ գրե-
թէ չեղածի պէս բան մնէ, եւ
եթէ դեռ ըլլալիքներն ալ ա-
սանկ պիտի ըլլան, աւելի լաւ է
որ բնաւ չըլլան, զի ասոնք չը
պիտի կարենան այն արդիւնքն
յառաջ բերել, ինչ որ կ'սպաս-
ուէր իրաւամբ այդպիսի կաշ-
մակերպութենէ մը:

Արդ եթէ Հայաստանի գա-
ւառաց մէջ ալ այսպիսի ժան-
տարմաներ պիտի դրուին նէ՝
դրուել և կամ ոչ՝ միևնոյն
բանն է, զի միշտ ոստիկանու-

Թեան անունը ժամտարմայի
փոխակերպ, մարդը և ընթաց-
քը դարձնալ միևնոյնը պիտի
մնայ, ատկէ ինչ օգուտ :

Բայց եթէ ժամտարմայի ոս-
տիկանութեան մէջ քրիստոնե-
եայնեք ալ մտցուելու ըլլալ,
ինչ օգուտ պիտի ունենայա՞յդ,
քանի որ քրիստոնէի անձին վը-
րայ՝ կառավարական ոստիկա-
նութեան պատիւն ու արժանի-
քը պիտի չպահուի ու չյարգը-
ուի :

Օրինակ վանայ հայ ոստի-
կանի մը (վարդան անուն, զոր
երէկուան թերթով ծանուցինք)
չարաչար և մեռնելու աստիճան
յայտնաբար դանակածուիլը
թուրքէ մը հրացանի բռնովը,
որոյ համար երբ ելեմիտ սրբա-
ղան փոխարինութիւն կ'պահան-
ջէ կուսակալէն, այս վերջինը կը
պատասխանէ թէ՝ ատի իր խառ-
նուելիք գործը չէ :

Ահաւասիկ հայ ոստիկանու-
թիւն, զոր եթէ պաշտպանող օ-
րէնք մը և կուսակալ մը չզըտ-
նուի (չիտակն բռնու համար
մեք Հասան բաշայի նման ար-
գարախոհ և հայրենասէր կա-
սակալէ մը այսպիսի վարմունք
մը և պատասխան մը չէինք ըս-
պասեր, և կ'փափաքեմք որ
այս տեղեկութիւնն ալ, զոր
կ'ընեն վանէն, սուտ եղած ըլ-
լայ), միշտ թուրքէն պիտի հա-
լածուի, և թուրքն ալ նեղը մը-
նալոյն պէս՝ փախչելով անպա-
սիւ պիտի ազատի :

Արդ եթէ ատեն և այսպի-
սիք են ըլլալիք բարենորոգում-
ները, աւելորդ է ասոնցմէ ի-
րական օգուտ և բարիք մ'ըս-
պասիլ, այլ մաղթելու ենք որ
պարագայներն օգնեն ի. Դրան,
որպէս զի սա ալ իր այժմու
գտնուած մարդու և զրոմի նե-
ղութիւններէն ազատելով, աւե-
լի իրական և ճշմարիտ բարե-
նորոգումներ գործադրելու վի-
ճակին մէջ գտնէ ինքզինքը :

Իսկ մինչև այն ատեն մեր
ինչպէս վարուելու եղանակն ալ
խոհեմութեան եւ փորձառու-
թեան եթէ հարցնենք՝ չուտով
կուսանիմք :

Հակահասունեան կաթողիկ
Հայոց պատրիարք գեր. Բիւ-
րէշեան, ինչպէս ի. Դրան, նոյն-
պէս և Հակահասունեանց ե-
րեսի. Ժողովին ալ ուղղելու ա-
մակ մը յանձնեք է այս գչ. ա-
ռաւօտ, որուն մէջ կըսէ թէ՝
ինքն արդէն անցեալ տարի մա-
յիս 6ին հրաժարագիր տուած
էր, հրաժարման պատճառները
բացատրելով, իսկ այն ատեն
նախկին հայոց Երեսի. Ժողո-
վոյ կողմէն տրուած վստահա-
ցուցիչ խոստումներուն վրայ ետ
առած էր հրաժարականը, սա-
կայն անկէ ի վեր մէկ կողմէն

հասարակութեան բոլոր գործե-
րուն երեսի վրայ մնալը նկա-
տելով, միւս կողմէն ալ բոլոր
կաթողիկ հայոց պատրիարքու-
թիւնը մինակ դ. Պօլսոյ մէջ և
այն ալ ժողովրդին մէկ փոքրա-
թիւ մասին մէջ կեդրոնանալու
վը, թէ՝ հոս և թէ դրսերը կը-
րօնական և վարչական գործոց
անտես մնալովը՝ բոլորէկեղեց-
ւոյն արդար ցատու մն ու բար-
կութիւնը իր վրայ հրաւիրած
էր Միանգամայն իւր անձնա-
կան վատառողջութիւնն ալ ա-
ռնց վրայ բարդուելով, այս
անգամ վերջնական և անդառ-
նալի կերպիւ հրաժարական
տալու կ'պարտաւորուի :

Հակահասունեան Հայոց ե-
րեսի. Ժողովը սոյն հրաժարա-
գրին վրայ մէկ երկու օրէն
պիտի գումարուի, հարկ եղած
որոշումը տալու համար :

Կ'հաւատեն թէ գեր. Բիւ-
րէշեանի առ Հասուն գերապա-
ծան երթալով հնազանդու-
թիւն յայտնած ըլլալու գէպ-
քին վրայ, Աւսարիոյ դեսպան
Ջիշի կոմսը, գաղղ. դեսպանին
Ա. Թորգմանը Պ. Լօնժվիլի Պա-
պական Նուիրակ Մօսկուիէն
բասիէլլի և ուրիշ մէկ քանի ե-
րեսի անձինք Հասուն գերա-
պայծառին երթալով խնդակ-
ցութիւններն յայտնեք են :

Ծանուցինք անցեալներն թէ
Սեփաւորոյ գաւառական վար-
չութեան անկանոն և լեւրի
կազմութեանը դէմ տեղւոյս
Սեփաւորոցի ազգայինք բողոք
մատուցեք էին Պատրիարքարա-
նը :

Կ'իմանամք այս անգամ թէ՝
Պատրիարքարանէն զրկուած
հրամանին վրայ, փետր. 9ին
Սեփաւորոյ երեսի. Ժողովը և
գաւառական վարչութիւնն վե-
րակազմելու գործոյն ձեռնարկ-
ուեք է :

Նա եւս Մանգումէի անցեալ
մէկ թուոյն մէջ Գաղանձեան
էֆի ստորագրութեամբ հրա-
տարակեալ նամակի մը պատաս-
խանք զրկուած է մեզ Սեփաւ-
որայէն ի հրատարակութիւն,
զոր հարկ չհամարելով հրատա-
րակել, միայն խորհուրդ կը
տամք թէ՝ տեղւոյն ժողովրդ-
եան արդար և իրաւացի գան-
գատանաց առարկայ եղած թե-
րութիւններն բառնալով, Սիւե-
քիւրիմեան ընկերութեան նը-
պատակը միայն աչքերէն առ-
ջեւ ունենան և առ այդ հաս-
նելու համար սիրով և միաբա-
նութեամբ աշխատին :

Վերջին թղթաւորելով Սե-
փաւորայէն մեզ հասած տեղե-
կութիւններն կ'հաւատեն թէ,
կովորէն գիւղի հոյակաւոր չա-
րագործն Միհր Ալի, որ մէկ

հայ սպաննելէ և 8 ալ վիրա-
ւորելէն ետքը, պատառաւնի
և հարցաքննութեան կանչուած
միջոցին՝ սպառազինեալ կ'գոյ
կ'ներկայանայ եղեր, և օր մ'ալ
սուրը ցոյց տալով պատասխա-
նեք է թէ, «Իմ Շէրիթս ստ-
թուրիս ծայրն է, բոլոր հայոց
գիւղերը պիտի աւերեմ, բնա-
կիչները բնաջինջ պիտի բնեմ,
և իմ մարդիկներս պիտի բերեմ
հոն բնակեցնեմ», այս յանգու-
գըն չարագործ և հուղիւհար
պարսիկը, իմանալով որ զինքը
ձերբակալութեան և արգելման
տակ պիտի տանեն, տեղական
կառավարութեան թոյլ ընթաց-
քէն օգուտ քաղելով և առանց
մէկ երաշխաւորն տանելու,
այս անգամ Սեփաւորայէն վե-
տեք անյայտ եղեր է :

Հալէպէն փետր. 28 թուոյ
երէկ Պատրիարքարան հասած
հեռագիր մը կ'ըմտուցանէ թէ,
Մարաշի Զեքէշեանն առհիկ
գիւղացիներէն ձիահանի կոմսու-
րը բռնելով, հայ ճանբորդները
կողոպտեք, չարաչար վիրաւո-
րեք, չատերն ալ մազապուր
Մարաշ փախուցեք են, Զեյ-
թունցիներէն մին սպաննուած
և երկուքն ալ անյայտ են և
թէ Հայերուն ճանբորդութիւնն
անհնարին եղած է այն կողմե-
րը :

Բաղէշի մեր թղթակցի նա-
մակին շարունակութիւնը :

Դեկ. 27ին, Պարսոն կրկին
իր չար արարեաններով միա-
տեղ Ղուլթիք գալով բոլոր ե-
րեսիներն ոչնարի նման կ'գամէ,
և սուրը մերկայեցնելով համայն
բնակիչքը սրէ անցնելու սպառ-
նալիք կ'կարգայ (ողորմելի գիւ-
ղացւոց տագնապը յայսմ ժա-
մու զգալի է), պատճառելով
թէ «Իմ վրաս բողոք բարձիք,
կառավարութիւնը զիս բան-
տարկեց, ոսկիներս չորս կողմս
սփռելով հաղիւ ազատեցայ, այ-
ժմ պէտք է ոսկիներուս տեղը
լեցնեմք...» Բնութեան ա-
զատ ծնած մարդեր, անբան ա-
նասունի նման կապուած են
բարբարոսի մը շղթաներով, կոր-
սնցուցեք են խելքը, գիտու-
թիւն, տրամաբանութիւն, ոչ
կրնան խօսիլ, ոչ փաստաբանել
և ոչ իրաւունքնին պաշտպանել
ինչ ընեն, որով դիմեն, կռու-
վարութեան... անփոյթ է, Ազ-
գին, ձեռնհասութեան վեր է,
քառիկն... պարպուած է, ու-
րեմն ինչ ընեն, զիրենք չղթա-
յակապ ընող անխիղճ բարբա-
րոսի սուրին առջև գլուխին
խոնարհեցնելով ծնկան վրայ
եկած կաղաչեն, և հո՞նք խա-
տան Եռուսթ անուն անձէն
5 օսմ լիւր տողոսիւ առնելով

խնկարկութեամբ կ'մատուցա-
նեն և ապա քրդին շղթայէն
կազաւորն, Բանուորն Պարսո
զայս 5 լիւրան կ'լիկեն ետք տը-
նէ Եռուսթ շղթայով իւրաքանչիւր
տունէն երկուքէն՝ մինչ կէս լի-
րա ալ կառնու, և յետ այս
անտանելի հարստահարութեան՝
գիւղացիներէն ապահովաղ իր մը
կուգէ զինքն արգարացնելու,
այսու պայմանաւ որ ուրիշ ան-
գամ զիւղին քննու մը չհասցնէ,
իսկ գիւղացիք վարպետութեամբ
մը չեն տար :

Մեծ. Տէր Խալաղիր, կ'ա-
մըջնամք ըսելու որ տեղս և
վաշտ զօրք և լիվա բաշա մը
կ'գտնուի, իրենց քիթին տակ
Քիւրտեր այսպիսի կ'ենեք, կը
կեղեքեն և կ'հարստահարեն
Հայ ազգայինք, նոքա բոլորո-
վին անտարբիր իրեւ հանդի-
սատես մը կ'կրնան :

Ղուլթիքի ազգայնոց մեծա-
դոյն մասը, Կ. Պօլսոյ մէջ ջրակը-
րութիւն, մաքսատանց բռնա-
կրութիւն ու այլեւալ տաժա-
նակիր արիւնաքորտնք աշխա-
տութիւն յանձն տուեք են, որ
իրենց անվճարելի պարտուց գո-
նէ տոկոսն կարենան ճարել, եւ
իրենց ողորմելի բնտանեաց հո-
գեպահիկ չորաբեկ կորիկէ հա-
ցին ձեռք բերել, թողլով զայ-
սոքիկ անհրաժեշտ պարտակա-
նութիւններն, անցեալ ձեռք նոյն
բարբարոսի հրացանին զոհ գա-
ցող Խաքէնալեւեան Պետրոսի
եղբայր Պօղոս անուն անձը վան
կ'զրկեն, իրենց արեան քրտին-
քի վատաւորով, որպէս զի վսեմ
կուսակալին բողոք բարձած,
Պարսոն և իր արբանակներ
ձերբակալել տայ, նա ալ հազար
ու մէկ հեռագրեր ու հրաման-
ներ զրկեց, սակայն տեղական
կառավարութեան կողմէն նո-
ցուց բռնուին անհնար եղեւ,
զգալի է ասոր մէջ ինչ գաղտ-
նիք կայ, հուսկ յետոյ Պօղոսի
զրգանի արգարաւատակ ոս-
կիներն ալ պարպուելով, երկու
օրէ ի վեր տեղս եկած ձեռն ի
ծնօտ տարաղիր կ'ընչին :

Եւս.— Ըսինք անցեալ աւուր
մէկ թերթով թէ այս ան-
գամ ի. Դրանէն զրկուած ազգու-
հրամանին վրայ, Պարսոն բռն-
նուելով վան տարուած է, ուր
և այժմ դատաստանի տակ կը
գտնուի :

ՄԵՈՑ ԽՆԴԻՐՆ

(Շար. թիւ 1885)

Արդարեւ այս ուրիշ բան մը
չէ, եթէ օր յարուցեալ ի դը-
ժոխոց, իւր մահուան կտակն կը
բանգապուչէ, որովհետեւ տառը
տարիի մօտ է որ այդ խոսիւ-
թիւնը խորմեան Հայրիկի հոն
եղաւ, և բուն իսկ արդի Ամեն
Պատրիարք Ներսէս Սրբազան

հայրն ալ քննեց, որ կրկին վա-
նական խնդիր էր, յետոյ խը-
րիմեան Ս. Հայրիկին իր հայրա-
կան գլխով մեր պարտքն թու-
ղուց, մեք ևս մեր որդեկան
պարտքն իրեն թողուցինք, նա
մեր ճակատն համարեց, մեք
ևս մեր Հայրիկին Ս. աջն համ-
բուրելով և պաշտօնական նա-
մակ առնելով վանք գացինք,
Ուստի եթէ մեր ազգայինք ու-
րիշ գործ մը գտած են մեր և
խորիմեան Հայրիկին մէջ տեղը,
թող մեր քնքուշ միաբանու-
թեան սրտին համաձայն զմեզ
դատապարտեն, իսկ արդ՝ ահա
մեր խնդիրն պարզուեցաւ, Մամ-
բրէ Ս. Հօր և միաբանութեան
խնդրոց նկատմամբ, Ուստի այն
ժամանակին որ մեք խորիմեան
Հայրիկին կ'ընդունէինք վանա-
կան խնդրոց նկատմամբ, եթէ
Մամբրէ որդի, Ս. կարապետի
վանուց միաբան էր, ինչպէս խո-
րամանկութեամբ կ'էմէր ու կը
պարտկուէր խորիմեանի Պատրի-
արքութեան աթոռի ներքեւ՝
իրեն եպիսկոպոսութեան փառք
որտաւ նպատակաւ, և եթէ
Մամբրէ իր շահուց համար չէր
որ կ'ընծէր խորիմեանին, ինչէն
հարկադրեալ նորոգ ի Պատրի-
արքարան կ'գրէ հին դէպքեր
իշխելով, հալած խաչ, խորտակ-
ուած կանդգը և գողցուած ա-
ւետարան կ'ընդգծէ, բայց
թէ կամ այն ատեն միաբան
չէր Մամբրէ Ս. կամ առ ահի
հրաժարական տուած էր, և ե-
թէ բողոքներ մեր հետ, լմեզմէ
առաջ ուրիշ կրօնքի պիտի վա-
ղէր, և երբ մեք բուն լատինա-
ցոց եկեղեցին գնացինք, բո-
լոր ազգայինք գիտեն որ մեք
ոչ մեր գլխարկն ու հագուստն
փոխեցինք, և ոչ ալ մեր հայ-
րենի եկեղեցին ուրաքանք ու
բանադրեցինք, և ոչ երբեք
մեր սրբազան հայրապետներուն
խոռ աչքով նայեցանք, ինչպէս
խորախանեան Նիսիս վարդա-
պետ, գնալով կարին յեկեղե-
ղեցիս կամ Օրիկաց (՝) Գալով իր
մանկական ցանկերուն, ըստ
պապական դրութեան նշովեց
և բանադրեց զեկեղեցիս հայոց,
և բոլոր հայոց և հայ հայրա-
պետաց գումարը, որով պիտի
երթար վենետիկ ուսանելու,
և քանի մը օրէն յետոյ վա-
չկով ի Պատրիարք ի Ղազար վար-
դապետ, և այն տեղ չունելով
հանգիստ, կ'ընդունէր ի Ռա-
դէշ առ Մամբրէ վարդապետ,
մանկով յաշակերտ իր վար-
դապետին, և եղաւ սիրտ, աչք-
միտք, և զօրութիւն Մամբրէ-
ին, և այսօր կուսակից չէ
Մամբրէ սրբազանին, և չպատ-
կառելով կրօնի թէ ժողովի և
արդարութեան ստիպելու ևն,
և կրօնի թէ դեռ ի պաշտօնէ
դադարեալ են, և իրենց վար-
դապետութիւն անվաւեր է:
Արդ եթէ մեք ի պաշտօնէ դա-
դարեալ ենք, և անվաւեր է մեր
վարդապետութիւնը, ինչէն
հարկադրեալ Մամբրէ սրբազան
միայն մեր լոկ ստորագրութեան
նը յենելով, զնեքստն հակառակ
ազգային որոշման՝ վաւերացեալ
վարդապետ կ'ձեռնադրէ, բայց

չեն գիտեր որ այդ թոյնը միշտ
իրենց շրթունքներէն միայն
կ'ժայթքէ, և չեն գիտեր որ
իրենց կարծիքն միշտ սուտ և
սխալ եղած է, և մեք եթէ
իրենց քսածին պէս էինք հոր
եկինք ի Կ. Պօլիս, Սրբազան
Պատրիարք հօր և կրօնական
Սրբազան հայր որոշմամբ և
հաւանութեամբ առանց բան մը
ըսելու, զմեզ եկեղեցեաց քա-
րոզիչ կարգեցին, Ուստի չմե-
նանք նաեւ Միսիթար վարդա-
պետի մասին որ սեւ երես սը-
տութեամբ կըսեն թէ իրենց
ազգեցութեամբ փոխանորդ-
բնաւորեցաւ և Առաջնորդար-
նի բանակովը գլխարկ պիտի
չախճախէին, և եթէ Միսիթար
վ. մեր ազգեցութեան ներքեւ
էր, ինչպէս մեր ազգեցութեան
տակէն երեւոյժ պօրթիին հան-
րագիր կ'ընէր Մամբրէ սրբա-
զանի նկատմամբ, և որոց խա-
բուսիկ ստորագրութիւն դեռ
ի Պատրիարքարան կ'իկնայ, և
որոց զէմնայ գրած են թէ
առաջ միմիայն հակառակին
բայց ի կորուստ մարդկան միա-
բանին և եթէ Մամբրէ սրբա-
զան այդ քսած դեւերուն բն.
կեր չէր, ինչէն խորհուրդ հա-
կառակ օրինաց՝ հանրագիր չի-
նելով սրբազանին՝ վանահայր
կուզէին, ո՞վ չէ գիտում որ ի-
րենց և Մամբրէ սրբազանի ազ-
գեցութեամբ Միսիթար վար-
դապետ փոխանորդ բնաւորե-
ցաւ, որովհետեւ Միսիթար վար-
դապետի փոխանորդութիւնը
Մամբրէ սրբազանի վանահայրու-
թեան նախագահութեան էր, և Մամբ-
րէ սրբազանի վանահայրութիւն-
ը կ'որոշուէր զՄիսիթար
վարդապետի Առաջնորդու-
թեան, և որոյ նկատմամբ ի
Պատրիարքարան հանրագիր ալ
եկաւ թէ զՄիսիթար վարդա-
պետ Մշոյ Առաջնորդ կուզենք,
և որոյ դէմն ալ Մատիս լրագրի
միջոցաւ հրատարակուեցաւ,
կարգէր վ. Լատին
Շարունակելի

Կ'պատմեն, թէ և հաւատալ-
նիս չգար, թէ՛ Պօլսոյ թաղե-
րէն մէկուն դպրոցին հոգաբար.
ձուներէն մին, իր շարունակ ա-
նողք խառնութեամբ պատճա-
ռաւ, առջի օրը դարձեալ դըպ-
րոցին սրահը ի ներկայութեան
աշակերտաց՝ տղայ մը խառն
պատճիւ տալու միջոցին, տղին
միւս ընկերները 10-15ի չափ
տղայք վրան կ'յարձակին եւ
ընկերին ազատելով, յիշեալ
հոգաբարձուն ալ կ'գանակած են
չարաչար, մինչև մօրուքն ալ
փետտելու ստիճան:

Հոգաբարձուն այս աղոց
պարագային 8-10ի չափը
ստիկանութեան կ'յանձնէ, որք
ժամու մը չափ Մէրքէզը բան-
տարկուելէն ետքը, քէհեային
և Միսիթարին միջնորդութեամբ
ըլ կազատին:

Խառնութիւն Ասիական բնի-
քնդհ. ժողովը նիստ տնի յա-
ռաջիկայ կիր. օր. որոյ հրաւի-
րագիրն ու օրակարգը վաղը պի-
տի հրատարակուի:

Զմեռնիայէն հետեւեալ հե-

տարբերական դէպքը կ'ձանու-
ցան, որ միանգամայն մեր
ազատ հերիտաւորաց ալ իրաւ
և դատ մ'ըլլաւ արժանի է:

Ռէշիայ քաղաքին մէջ երիտա-
սարգ մը հարուստ բնակիչէ
օրիորդի մը հետ նշանուած բլ-
լալով երբ ամուսնութեան հան-
դիսին կարգադրութիւններն
ընելուն կ'գայ կարգը, երիտա-
սարգ իր առնելիք թրախօմայի
վճարմամբ նկատմամբ խօսա-
պահանջ դառնալով կ'այտնէ
թէ՝ ստակը մինչև պատկին տ-
տենը եթէ իր ձեռքն յանձ-
նուելու բլլայ, այն ատեն ինքն
ալ կ'հաւանի աղջիկն առնելու:

Օրիորդին ծնողքը ասոր ալ
հաճութիւն տալով, հարսան-
եաց օրը ստակը ամբողջ կ'յանձ-
նուի փեսայացուն, որն որ կը
պատրաստուի ամուսնանալու:

Պատկայ իր քահանայն Առ-
եալ զձեռն եւ այլա ևն. քսած
ատեն, երբ աղջկան ձեռքը ե-
րիտասարդին ձեռքին մէջ դը-
նել կուզէ, աղջիկը ետ քաշելով
իր ձեռքը, կառաջարկէ որ ե-
րիտասարդը իր ձեռքը դրամին
երկնցէ, փոխանակ իրեն Ասոր
վրայ շատ կ'մտախնայ աղջի-
կան, իսկ սա փրփապէս կը
մերժէ երիտասարդը, բոկով
թէ՝ նա ալ թէ զինքը սիրելուն
այլ դրամին սիրտն համար ի-
րեն հետ կուզեր ամուսնանալ:

Ասոր վրայ հարմիրք երե-
կոյթի փոխաւորով գիշերը մինչ
ի լոյս զրօտելով կանցնեն:

ՀԵՌԱՅՐԱՎՈՒՐ
Այս առաւօտ հաս-
նարի 12.— Չախակոյցն ու
ձախակեցումն այսօր որոշեցին
մայիս 16ի պաշտօնէւթիւնը
գետնի տակ ձգելու առաջարկը
մերժել, իսկ հանրապետական
միութեան կուսակցութիւնը
գայն բնգունել որոշեց:

Բէշիմ 12.— Թէյոս դետն իր
ամբարտաւանքը ձգելով, Յե-
կիտին յաղաքն սղողեց, ժողո-
վարդք փոխաւ, կըսուի թէ
Յէկիտին սինակիկը փոխ է,
հոգ ապաստանող անձանց շա-
տը փրատակացը տակ մնալով:

Յիւլիպէ 10.— Արեւելեան
Բուսէլիի գանձային վերադա-
սույ Պ. Ոմայ Հասթոյ երթա-
լով, իրեն զէմ նորէն թշնամա-
կան ցոյցեր եղան, Ռուս կառա-
վարէն Հասթոյ մեկնեցաւ:

ԳՐԱՄԱԿԱՆ
Լոնտոն 12.— Բաց 11 7/8
Գոյ 12
Բարիշ 12.— Բաց 12 65
Գոյ 12 07 1/2
Պուլով 12.— 12 07 1/2
Այս առաւօտ բացուեցաւ 13 68
Թիվադրամ 471-20
Բումբի 47-00

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ
Մեծ եպարգոսն այս գիշեր
իր ապարանքը փառաւոր կո-
շանք մը տուեր է Բ. Դրան մե-
ծամեծներուն:

— Նախարարական փոփո-
խութեանց տագնապն անցած
կ'նկատուի:

— Թօքվիլի ծրագրին բոլոր
բովանդակները կ'ձանու-
ցեն:

— Գաւառաց մէջ անուղղա-
կի (բուստմաթի) տուրքերը մէ-
կալիք դրամի վերածելու հա-
մար հրամանագիր մ'ինչքան որ
հրատարակուած է, սակայն ա-
տի Պօլսոյ համար չըլլալով, առ-
այժմ մարտ 15ն ամեն տեսակ
տուրք դարձեալ քստ առաջնայն
100 զրչ. ողջ թղթայրամով ըն-
դունուիլը պիտի շարունակէ:

— Խառնութիւն Հալլը օղլու
թաղին մէջ նորէն այս օրերս
գիշերային գողութիւններն ու
յարձակումնք անպակաս եղած
են, Անցեալ շաբթու Բարմազ-
Պարուի մօտ փողոցի մը մէջ
ժամը 1ին միջոցները անձ մը
զգեցունելով կողպտուի էին, 2
անգամ աղջկանց սզգ. վարժա-
րանք գող մտեր էր, այս գիշեր
ալ ժամը 8ին միջոցները 4 հո-
գի Հալլը օղլուի շուկայն հա-
յազդի նպարակածառի մը քա-
րաշէն խոնտութիւն երկաթեայ
գուռը կտրելու շատ աշխա-
տեր, իսկ քովի տնէն աղմուկը
խնայուելուն վրայ՝ դէպ ի լոյս
փոխեր են Գիշերապահը թէ-
պէտ ետեւուն ինչեր, բայց մե-
կն ալ չեն կրցեր բռնել:

Այս յաճախ պատահած
դէպքերուն վրայ Ոստիկանու-
թեան ուշադրութիւնը կ'հրա-
ւիրուի:

— Կ'հաւաստեն թէ այս րշ-
օր Գաղղիոյ արտք. գործ. պաշ-
տօնէին նախագահութեանը ներ-
քեւ գաղղիացի դրամատեսարցմէ
մասնագործ մը գումարուեր է
Թօքվիլի ծրագրի քննելու հա-
մար, իրեն ստորդ կըսեն նաեւ
թէ՝ Գաղղիոյ կառավարութիւն-
ը իր վրայ առեր է այս մասին
Անգղիան ալ համադրու:

— Կ. Պօլսոյ քաղաքացե-
տութեան կողմանէ երէկ հրա-
տարակեալ ազդ. մը ծանուցա-
նելով թէ, մայրաքաղաքիս մէջ
տիրած միւս սղութեան պատճա-
ռը՝ շորունակ տակէ Բումբիի
կողմերը կենդանի զրկելն եղած
է, այս թուականէն յետոյ Պօլ-
սէն կով կամ ոչխար Բումբիի
զրկելը կարգիլէ մինչև ի նոր
անօրէնութիւն:

— Քաղաքացեւութեան օս-
կագնայն չհնազանդելու համար
գործադուլ ընող կառապանե-
րն, իրենց և ձիւներուն անօ-
թութեան հարկադրեալ, երէկ-
ուրէն նորէն բանելու ստիպ-
ուեր են, այդ սակագնայն հը-
նադանդելու հարկը ճանչելով:

— Կէպրէի կառաւարմը գշ-
երեկոյ Հայտարարաւ գաղու
միջոցին Մալմէրէի և Էրէնքէօյի
միջև չոգեկաւար գծէն դուրս
խոյստակներէն մին ծակելով՝
հրաժարմին դէմքն ու մարմ-
նայն մէկ մար կ'իտայի, վնաս-
ուած գիծը նոյն գիշերը նորո-
գուելով, Էրկոթուղին երէկ
ստուրնէ նորէն կ'շարունակել
բանի:

— Այս եօրիկէն 5 ամսապա-
ճած յոյներ ամսական ծախ-
ով անդերին դառնալու ատեն
նին, րշ. օր ճանրան կողպալը
ուելով կապանուին:

(՝) Ամենուն ալ երեսը ճեր-
մակ է. . . — Մ. Խ.

ԱԶԳ.

Դպրոցային — Արևելեան
ընկերութեան Տնօրէն խորհուրդը
զը պատիւ ունի ծանուցանել
թէ որոշած է Հայաստանի քա-
ղաքացիական տնտեսական
նշանակութեան հարցերը
նշանակել (300) օրինակ ընդար-
ձակ աշխարհագրութեան մատ-
եան, զին 1 մէծիտ, աշխա-
տասիրութիւն Պ. Պ. Աղնաւոր-
եանի ի պէտս դարձուցնելոց :

Ուստի կ'ընդունի որ ու-
սումնարանաց հոգաբարձու-
թիւնը ուղղակի և կամ իրենց
պօլստեանի ներկայացուցիչնե-
րուն ձեռօք բարեհաճին, ի
գիւրութիւն Տնօրէն խորհուրդ-
րանակցութեան մտնել իրեն
հետ :

Տնօրէն խորհուրդը սենեակը
Ղալաթիա, Սառնեճը խան,
բաց է ամեն եղ. և չք. երեկոյ
ժամ 10էն ց11 ու կէս :

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱՌՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՅԱՅ ՀԱՄԱՐ
Գրեց Հ. Դրեքուր Վ. Գովրդեան
Միթ. Ուստի
Վիեննա Միթ. Տպարան 1879

Բովանդակութիւն. — Միջին ու
Նոր Պատմութիւնը մինչև մեր օրե-
րը հասցնող համառոտ բաց կա-
տարեալ գէպերն, մասնաւորապէս
ազգ. զարթոյց գործածութեան հա-
մար շինած է. — Շատ հմուտ գր-
քութիւն է, ուր յայտնապէս կ'ընդ-
նդնակաւ քննարկուի խորհուրդի
համոզութիւնը. — Սոր արժէքն այնչափ
աւելի մեծ է, որչափ առաջիններէն
մէկն է ազգի մէջ, իբրև դասա-
գիրք: Վասն զին թէև կայ հաս մը
ամէկէ 30 տարի առաջ հրատարակ-
ուած, բայց, բաց անկէ, որ զարկ է
բողոքական հաստատուն գրութիւնէ,
շատ ընդարձակ բովանդակ է և Պատ-
մութեան հոգին ու ծուծը թող տա-
լով, աւելի դասարանաց ու զրոյց.
նորու միտ դրած է, որ պատմու-
թեան չէ՛ թէ էական, այլ երկրորդ-
ական, մասնաւոր թէ երրորդական
մասը կ'կայացանք: Ուրիշ այլևայլ
տեղեր ու այլևայլ ժամանակ հրա-
տարակուած պատմութեանները ամ-
բողջ չեն, մասնական են: Նուաճա-
րեւ զործածութեան մէջ մտնելի
գրքեր, հասարակութեան ձեռքը
գետ չեն կրնար տրուիլ. — Ուր թո-
ղունք որ մատենագիրը, շատ մտա-
գիր հայեցողութեան, զոր մինչև մեր
օրերը հասած է՝ թուականներու
ճշգրտութեամբ իրականացնելու
համար, մատենագրութեան վրայ
բաւական տեղեկութիւններ:

Մտքեր սպաղարկութեամբ 256
էջ պարունակող այն գիրքը, համե-
մատութեամբ շատ ատեն է, 2 ֆը-
րանք գնով և իր Ժամանակ Վիեննայի
Միթ. տպարանի գրատպարանացն
ի բանկայթի և ամեն ազգային գրա-
վաճառաց քով :

ՀԱՄԱՌՈՑ ԴԻՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուք Դիւնք Մեքեան
82 էրեսէ բաղկացեւ և իւր
տպարանէն ի լոյս ընծայուած է.
կրնայ զարթոյց մէջ իւր դասագիրք
ծառայել, զին է 50 սանդիւն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ
ՏԵՏԵԱՆ
ԺՈՂԵՑ ՊԱԼԱՍՄՈ
ԹԱՐԴԱՆԵՑ

ԱՐԱՊՈՅ ԲԸ. ԵՆԱՄԱՃԱՆ
Աղէյանը Տիւմա գաղղիացի
մեծանուն վաճառական գրէն երաժ-
շտի դործին ճիշդ այն է վերջին հա-
տորն ալ իր Դիւնքի Տէտեան եղբարց
տպարանէն ի լոյս ընծայուելով Պոլս
հասած է: Այս գեղեցիկ վեպին մէջ
ուր 1. օրի Ժ. Կեանքը, փարքն ու
վախճանը նկարագրուած են, հետ
դէպէ՛ կ'ընդհանրանան Վալթէն և
Լուսնո՛ւ անցեալ դարուն այն երկու-
մեծ մարդիկը, թագաւն գիտութիւն-
ներ կ'այտնեն, Մասնաց օթեակ-
ները օտարին առջև կ'ընդունին: Ա-
մեն կարգի և հասակի մարդ լւր
սիրած իր թը հոն կ'գտնէ և ին-
չը Ժամանակ ինչին ճամբ Զիւն-
կըրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղալա-
թեան գրատունը և ուրիշ գրութե-
անաց քով:
Գին 2 ֆրանք 25 սթ.

ԿԻՅԼՈՄ ԹԵԼԼ
ՈՂԵՐԳՈՒԹ. Ի ՀԻՆԻ ԱՐԱՐՍ

Թարգմանեաց գաղղիերենէ
Սէպէլ Ա. Կէլապեան
ԱՆԴԱՄ
Քարտուղարաց գիւտին
Արտաք. գործոց պաշտօնատան
որ ի Բ. Դուռն
Շիւթը գերմանացի հռչակաւոր
հեղինակին ըստի գործերէն մին
եղով այն ոգրեղութիւնը մէկ էնոց
թղթագրամի կը վաճառուի Վ. Յ.
Մարգարեանի գրատունը Մէքեան-
Չարը թիւ 57 և ամեն գրավաճա-
ռաց քով:

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ
ՅՈՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՐԱՆ

Ի՛ժամուր Եֆէի-ճամբ Զիւն-
կըրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղա-
կոսեան գրատունը և ուրիշ գրավա-
ճառաց քով:

ԳԻՆ 1 ֆրանք
ՇԱՐԳ
ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ

Հեղինակութիւն
ԱՐԱՊԱՆ ՊԵՅԻ

Վսեմ. Վարդան Պէյի գրէն
երաժ. այն ընտիր պատմութիւնը զոր
մինչև հիմայ թէրե՛ք մանր. — Լ. ֆրեար
լրագրոյն մէջ մաս առ մաս կը հը-
րատարակուի, այս անգամ կրկին
սրբագրութեամբ թերթ առ թերթ
հրատարակուի: Եւ ասանք է մաքուր
սպաղարկութեամբ, և որուն թերթ և
րեսէ բաց կայեալ մէկ թերթը՝ ձ
ղ. և տասը թերթերէ բաղկացեալ
մէկ մասը 51 զէ. և երեք մասերէ
բաղկացեալ մէկ հատորը 51 զէ. կը
ժամանի ողջ թղթագրամ:

Մէկ հատորի համար մ'այն բա-
ժանորդ կրնայ ընդունուիլ կամ իր
70 զէ. վճարելով:
Բաժանորդագրութեան տեղն է
Ե. Պոլս Սուլթան համար նշան է Բ.
Պէրպէրեանի փողոցատունը, Բե-
րայ թաղի Պաշի համարում ընկ-
զի օտարանէ: Եւրոպ. Սարաճեանէ
չուրչուր ձեռք կարողայ Սաստա-
նայի խանութը:

Թերթ առ թերթ կամ մաս առ
մաս վերագրելու տեղերէ՛ր գտա՛ հե-
տեւեալ հեղինակ ու կը ժամանին:

Պոլս Իմին Լուսնի Սուրբ Պողոս
տղայի խանութը, Բերայ Մեծ փողոց
ձախճառաց խանութները, Թարս
Պաշի ձախճառաց. Անդրէաս տղայի
խանութը թէ՛ Պոլս և թէ՛ Ղալա-
թի լրագրագրավաճառաց քով:
Տէր և հրատարակիչ Միհրան Ս.
Բիթապեան:

Ղալաթիա Դ. 28 փետր.
ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	13 08
Գոց	13 08
Բարձր զին	13 13
Յաճ զին	13 07
Թղթագրամ Բաց	470 00
Բարձր	473 00
Գաճ	458 20
Ժամը 11	473 00
Փոխ. 63ի	Փր. 074 00
» 65ի	» 078 00
» 69ի	» 076 00
» 73ի	» 070 00
Պանձառումն	22 50
Սուրէթէ Ժէնէրալ	4 22
Սուրէթէ Օթոման	3 00
Պանք տը Բոնաթ.	6 12
Քրէտի Ժէնէրալ	5 07
Թրամիէյ	1 75
Բում. երկաթուղի	47 50

ԸՆԹԵՐՅԱՆ ԴՐՈՅՈՑ
(Ո. Բ. 100 ու 1 հարւ.)

Անդ. ակի	109.28
Գաղղ.	87.12
Բոլ	89.20
Վարպտ. տը Ժ	16.20
» թղթագրամ	09.00
Քրէմից	51 10
Հինգնոց	23 00
Մէթալիք	23 20
Ճերմակ մէծիտ	07.12
Պղինձ	179 00

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՍԱՂԱՋԱՆ
ԳՏՆՈՒԱՐ
ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցուի գեղը բոլորովին
բուռնացնելու բաղադրուած ըլլալով
թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կը գոր-
ծածուի ու բաղաժաթը ցուեր ու հի-
ւանդութիւններ չընտով կը բժշկէ:

Ամեն տեսակ Գոլի, Բառաճը-
սի, մէջքի կամ Եղիքներու ցուեր.
ու նաև Թանջը, Քօլէրա և այլ ա-
մառան հիւանդութիւններ ունե-
ցողները այս գեղէն խմելու եւ հե-
տեւեալ կերպով և կէս զաւաթ ջուրի
մէջ զիւր սպուրի մը զրոյալէն աւելի
չաքար, վրան լիցուր անուշի զրգալ
մը փանաւէ աղէկ մը խառնէ ու
խմէ:

Կոկորդի հիւանդութեանց և
Ուսեցիի համար գեղը վերայ շիւղ
կերպով պատրաստէ ու ժամը կամ
երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ
երկու անուշի զրգալ այն բաղադ-
րութեան խմէ: Գոլացաւ, Բիւսա-
թիլի, Սաքի ցուի, Սառնաքի ու
տեսակ տեսակ հիւանդութեան հա-
մար գուրսէն փանաւէ քանով աղէ-
մը շիւղէն է: Կիւսայի ցուի համար
քիչ մը բաժնակի փանաւէ մէջ
թաթիլակով ցաւած ակուսին վրայ
գնելու է:

Ամեն տեսակ երրորդ ցուի հա-
մար գուրսէն փանաւէ քիչ հարկ
կըլլայ, եթէ քիչ մը ալ ժամուի աւե-
լի շուտ բժշկութիւն կըլլայ:

Մարմնոց սրբութեամբ կամ ճմու-
ած տեղերը բժշկելու համար վրան-
զը պատրաստելու պէտ փանաւէն
վրան աղէկ մը լեցնելու է: Գոլա-
կով և իւր. կարուած վերքերը բժշկե-
լու համար՝ տրեւի չարած շուտով
մը վերքը կապելու և դապին վրայէն
Փանաւէ լեցնելու է մինչև որ Լաւ մը

թրջի փանաւէն նաև արեան շրջա-
նը նարագանջ ու բարձր բնութիւնը
կը գործադրէ:

Այս գեղին օգտակարութեանը
վրայ երկարօ էն գրել աւելորդ կը
համարուի, գործածողները զայն
միշտ կը գտնեն, ուղղորդ կրնայ ան-
ճամբ փորձել. գինն ամեն է: Կը
ժամուի Միւստեան և Ընկերաց Ա-
մերիկեան վաճառատունը որ ի Ղա-
լաթիա Կ. Պոլսոյ

ՀՐԱՆՑ ԱՍՍԵՏՈՐ
ՊԱՏԱՆԿԱՆ ՆԵՐՇԼՁՈՒՄՆԵՐ

Ուսումնասիր հեղինակն այս
գրքակին մէջ ամփոփած է իւր
գրութեաններն, որք պատանեկան
հասակի մէջ երկնուած. դեռ ա-
հաս հոգւոյ մը տառաջիկ զգա-
ցուններն և մտածումներն կը
պարունակեն:

Կ'ժամանի Եֆէի-ճամբ Զի-
ւնկըրէր ճատտէսի թիւ 2, Ս.
Ղալաթեան գրատունը և ուրիշ
հայ գրավաճառաց քով, ի գին
75 սանթիմ:

ԲԱՆԱԼԻ
ՀԱՅԵՐԷՆ ԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ԳՐԵՑ

Մ. ՄԱՄՈՐԱՆ
Ահաւաստի գեղեցիկ միթոս մը
Մամուրեան էֆի աշխատասիրու-
թեամբ մուտ գտնելով մայրենի լեզ-
ուի ուսման մէջ, կ'առաջնորդէ ա-
շակերտները շարադիր լինելու, չըս-
պասելով որ անոնք քերականութեան
տաղանթի չընկնեն անցնին:

Այս գրքով Զ. Բառաճը Տէտե-
անցըրաց տպարանէն ի լոյս ըն-
ծայուելով կը ժամանի Եֆէի-ճամբ
Զիւնկըրէր ճատտէսի թիւ 2, Ս.
Ղալաթեան գրատունը և ուրիշ գրա-
վաճառաց քով: Գին 50 սանթիմ:

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ
1879

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ'ժամանի գին 20 փարա մէծիտ

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑ
ՊԱՏԱՆԿԱՆ

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Գին 40 փարա մէծիտ
Տղաքը՝ Զ. Բառաճը

13 կենդանագիր պատկերներով
զարդարեալ այն ընդաճակ օրացոյցը
բաց ի բուն օրացոյցէն. կ'արունակէ
նաև վերջին Ռուս-Տաճկական պա-
տերազմին համառոտ պատմութեանը,
ասողակապահական ամենակարեւոր
գիտելիքներ, բարոյական սկզբունք,
ներ, խոյթման և այրածի գեղեր:
Քնասակար ճճները ջնջելու կերպեր:
Աստուծոյ զաւտ ազգային նշանաւոր
բանաստեղծ Քամառ Գաթիպայի
(Հայրուսթաք) վերնագրով մէկ
շաղկապ հիւստանաւոր:

Կ'ժամանի Զարդարեան վաճառ-
ատունը, Սուլթան Համաժ փողոց,
Ուրբ. Էֆէնդի խանի դիմաց, թիւ
12 և գրավաճառաց քով:

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՆԿԱՆԱՏՈՒ
ՊԵՂՈՍ ԳԻՐԻՇՁԵԱՆ

Ղալաթիա Բերշեմպէ-Բա-
ղար Պաքըր փողոց թիւ 12: